րիչ ձեռագիրների մէջ, ապացոյց, թէ շրջաբերական բնոյթ է ունեցել։

Քահանայութիւնը գերազանց բարիք է, երեք դասակարգով, երկնային զօրութիւնների կարգաւորութեան համաձայն. երկնային քահանայութեան շնորհը երկիր իջաւ սուեղծագործութեան միջոցով. առաջին յարացոյցը՝ թագաւորական, մարգարէական և քահանայական եռակի իշխանութեամբ Ադամն էր։ Նիւթը չորս մասի է բաժանում. առաջին. «զի՞նչ է քհպուի.». երկրորդ՝ «զի՞նչ նորին խհգ. և կարւմն.». երրորդ՝ «թէ քանի՞ս բաժանի» և չորրորդ՝ «զի՞նչ զգեստին նշանակէ. ունի և որո՞ գծք. իշխանեւ. և ապացոյց ունի»։ Այստեղ կրկնում է, գրեթէ, նոյն մտքերը, ինչ որ տեսանք եկեղեցու հաստատութեան ճառի մէջ (*)։

Նչեցու մահը մի անյայտ ժամանակագիր նշանակում է ՉՁԷ (= 1338) թուին. «վախճանեցաւ ս. վարդապետն Եսայի»(**). Նորա մահուամբ մեռնում է և դպրոցը Գլաձորում։ Դպրոցին անկումն այստեղ կապուած էր, կարծում ենք, քաղաքական պայմանների այն մեծ փոփոխութեան հետ, որ Աբու-Սայիդի մահուանից յետոյ տեղի ունեցան Հայաստանում՝ մոնղոլական պետութեան վերջին տարիներում. մենք առիթ ենք ունեցել նկարագրելու այդ շրջանում ծագած խռովութիւններն ու արշաւանքները իրենց ծանր, կործանարար հետևանքով նիւթապէս և կուլտուրապէս(*)։ Միւս իշխանական տոհմերի հետ Պռոշեանները էլ, երևի, հալածուեցան և աղքատացան, դպրոցն անապահովութեան եւ անուշադրութեան մատնելով, որի հետևանքով և մեռաւ ինքն իրեն։

Բայց Գլաձորի անկմամբ չվերջացաւ Պռոշեանների հովանաւորութեամբ կազմակերպուած և ուռճացած գործը. Նախ մենք տեսանք Սպիտակաւոր Աստուածածնի ծաղկումը, թէև փոքր չափով և կարճ ժամանակով նոյն իշխանութեան մէջ, գրեթէ, կից Գլաձորին և Սրկղոնիքին, որ Պռոշեանների «դարբասն» էր(**). բայց որ աւելի նշանաւոր է, Գլաձորից ճիւղաւորուեցան և զարկ ստացան Հերմոնի, Մեծոփի, Երզնկայի դպրոցները, բայց յատկապէս Տաթևի դպրոցը, որ Գլաձորի անմիջական յաջորդը դարձաւ յանձին Որոտնեցու և սորա աշակերտ Գրիգոր Տաթևացու. դպրոցական-գիտական այն մեթոդը, որ սկիզբն էր առել Գլաձորում, մասամբ միարարներից փոխանցուած, իւր ծաղկման շրջանն է ապրում սրանց օրով։ Օրբէլեաններին նուիրուած հատորի մէջ առիթ կ'ունենանք աւելի սերտ ծանօթանալու միջնադարեան հայոց դպրոցական մտածողութեան, մեթոդների, ծրագրի և յառաջ բերած արդիւնքների հետ։

(*) *Մենք օգտուում ենք Ջեռ. Էջմ.* № 2193/2178, 338*ա.* (*տես և* № 3937, 143*ա*)*. սկս. «Սկիզբն ա. բարեաց է անժմկն. ԱԾ . . »։ Ջեռագիրը ժողովածու է Նչեցու, Որոտնեցու, Վարդանի, Տիրատուր վարդապետի, Պլուզ Յովհաննէսի, Կիրակոս Երզնկացու, Յովհաննէս Սիւնեաց եպիսկոպոսի (Աւրպէլ?) մեկնաբանական քարոզների կամ ճառերի. առանձնապէս շատ են Տիրատուր վարդապետի աշխատութիւնները։ Գրիչն է Յակոբ սպասաւոր բանի «յերկրէն Ըռշտօնի», «եւ աշակերտ այս սոփերի, առ ոտըս սբ. վարժապետի, որ մականուն Կախիկ կոչի», այսինքն Յոհան Որոտնեցու։ Կարծում ենք Որոտնեցու աշակերտ Յակոբ վարդապետ Ովսանանցն է, որի խնդիրքով Որոտնեցու և Տաթեւացու աշակերտը Մատթէոսը գրել է քաղուածօրէն Գործք Առաքելոցի մեկնութիւնը (Ջեռ. Էջմ.* № 1247 *Նժ.*)։

(**) *Սամուէլ Անեցի, Վաղարշ.,* 1893, 168։ *Ըստ Ալիշանի (Սիսական,* 131) *Մինաս Ամդեցին Նչեցու մահը նշանակում է* 1342 *թուին։*

(*) *Խաղբակեանք Ա.,* 227։

(**) *Անդ, Ա.,* 231-238։